ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<01>> ապրիլ 2015 N 30

ք. Եղեգնաձոր

<<ՄԱԼԻՇԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱՋԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 96 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի պահանջի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության 12510000 (տասներկու միլիոն հինգ հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական

կապիտալը նվազեցնել 12 509 999 (տասներկու միլիոն հինգ հարյուր ինը հազար ինը հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամով՝ 12 509 999 (տասներկու միլիոն հինգ հարյուր ինը հազար ինը հարյուր իննսունինը) հասարակ (սովորական) բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 1 Հայաստանի Հանրապետության դրամ 1 հասարակ (սովորական) բաժնետոմս՝ 1 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի նոյեմբերի 7-ի <<<<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հիմնադրման մասին>> N 96 որոշմամբ հաստատված << Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2-րդ կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել << Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանին :

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 2015թ.

ապրիլի 1-ի թիվ 30 որոշման

<<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետ

<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է մեկ Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով :>> :

Աշխատակազմի ղեկավար Կ. ՍԱՀԱԿՅԱՆ